**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արազափ, Մարգարա, Ջանֆիդա, Փշատավան, Բերքաշատ բնակավայրերի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87-2 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի մայիսի 5-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Մեծամորի համայնքապետարանի և «ՄԱՏԵՍԱ» ՍՊԸ-ի հետ կնքված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում կատարված համադրումների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել աշխատանքների որոշակի ծավալների փոփոխություններ-ավելացումների:

**Փոփոխության նկարագրություն.** Մեծամորի համայնքապետարանի և **«ՄԱՏԵՍԱ» ՍՊԸ**-ն միջև 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87-2 Պայմանագրի.

1.1 Պայմանագրի 5.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 31,040,387.00 (երեսունմեկ միլիոն քառասուն հազար երեք հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ, որից 5,173,397.83 (հինգ միլիոն հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր իննսունյոթ դրամ ութսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:

1.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ համաձայն Համաձայնագիր 5-ի Հավելված 1-ի:

1.3 Պայմանագրի Հավելված 1.3-ին կից՝ հաստատվել է ավելացված աշխատանքների մասով աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը համաձայն Համաձայնագիր 5-ի Հավելված 2-ի:

1.4 Պայմանագրի Հավելված 3-ով և կողմերի միջև 09.12.2024թ. կնքված համաձայնագիր 1-ի Հավելված 2-ով, 28.04.2026թ. կնքված համաձայնագիր 4-ի Հավելված 2-ով հաստատված վճարման ժամանակացույցները փոփոխվել և հաստատվել է համաձայն Համաձայնագիր 5-ի Հավելված 3-ի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 1.1 և 8.5 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**